ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՋ-ԲՄԸ-ԱՀ31-01-1/08.01.21-ԱՄ ծածկագրով գնման բաց մրցույթի

«ՀրազՋԷԿ» ԲԲԸ հայտարարում է բաց մրցույթ թույլ հիմնային անիոնիտԱՀ-31 15 (տասնհինգ) տոննա գնելու համար:

Մատակարարման ժամկետ է սահմանվում մինչև 2021թվականի մայիսի 31ը:

Մրցույթներին կարող են մասնակցել ՀՀ ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական և իրավաբանական անձինք:

Հայտերը ներկայացնել հայերեն կամ ռուսերեն, մինչև 26.02.2021թ. ժամը11^{00}, «ՀրազՋԷԿ» ԲԲԸ, 2302, Կոտայքի մարզ, ք. Հրազդան, Գործարանային 1 հասցեով:

Հայտերի բացումը տեղի կունենա 26.02.2021թ. ժամը 11^{30}-ին, «ՀրազՋԷԿ» ԲԲԸ-ում:

Մրցույթների պատվիրատուն և ֆինանսավորողը «ՀրազՋԷԿ» ԲԲԸ-ն է:

Մրցույթների հաղթողի ընտրությունը կկատարվի գնային գնահատման սկզբունքով:

Մրցույթների հրավերների և լրացուցիչ տեղեկությունների համար դիմել՝ «ՀրազՋԷԿ» ԲԲԸ, հեռ. (223) 6-07-12, ֆաքս (223) 2-36-12, էլ.փոստ՝ info@raztes.am :

Անհրաժեշտության դեպքում դիմել Ընկերության ԳՏՏ-գլխավոր ճարտարագետ, գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Ա.Մնացականյանին, բջջ.հեռ (093) 93-22-33, քիմիական արտադրամասի պետ տիկին Փերիխանյանին, բջջ.հեռ (094) 20-22-18:

ՀՐԱՎԵՐ

(Հրապարակվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի համաձայն)

1. Սույն հրավերը տրամադրվում է «ՀրազՋԷԿ» ԲԲԸ-ի կողմից 2021թ. հունվարի 12-ին տեղեկագրերում հրապարակված 15 տոննա Ա-31 տեսակի թույլ հիմնային անիոնիտի գնման բաց մրցույթի հայտարարության հիման վրա:

2. Մրցույթի ծածկագիրը՝ **ՀՋ-ԲՄԸ-АН31-01-1/08.01.21-ԱՄ**:

3. Հայտը ներկայացնել Գնումների մասին օրենքի 30 հոդվածի համաձայն:

4. Մասնակցի որակավորման չափանիշների, մասնակցության իրավունքի պահանջների վերաբերյալ առկա փաստաթղթերի քննարկումը ՀՀ կառավարության 04.05.2017թ. № 526-Ն որոշման 59-րդ կետի պահանջների և Գնումների մասին օրենքի հոդված 6-ի համաձայն:

5. Գնման առարկայի բնութագիրը՝

Անիոնիտ Ա-31- թույլ հիմնային խեժը օգտագործվում է որպես զտող նյութ անիոնիտային առաջին աստիճանի զտիչներում: Անիոնիտը պետք է համապատասխանի ГОСТ 20301 կամ ТУ 2227-344-00203447-99-ի պահանջներին և ունենա սերտիֆիկատ: Իրենից ներկայացնում է անկայուն ձևի դեղին գույնի հատիկներ: Աշխատանքային զտամասի ծավալը՝ հատիկների չափսերը 0,4-2,0 մմ ոչ պակաս 92%, խոնավությունը ոչ ավել 5% : Ամբողջ իոնափոխանակման ծավալը ոչ պակաս 2,6մգ-մոլ/սմ^3: Տվյալ քիմիական նյութի պահպանման ժամկետը չպետք է գերազանցի մեկ տարին արտադրման օրվանից:

6. Հայտերի գնահատումը և ընտրված մասնակցի ընտրությունը կատարվում է բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

7. Պայմանագրի նախագիծը տրամադրվաում է մասնակցի գրավոր պահանջով:

8. Մրցույթն իրականցվում է մեկ փուլով, առանց չափաբաժինների: Մատակարարումը պետք է կատարվի մինչև «ՀրազՋԷԿ» ԲԲԸ-ի տարածք մատակարարի ուժերով և միջոցներով պահպանելով տեղափոխման ու պահպանման պայմանները: Մատակարարման ժամկետ է սահմանվում մինչև 2021թվականի մայիսի 31-ը:

9. Հայտով ներկայացվող առաջարկված գինը նշվում է ՀՀ դրամով, գրված թվերով և տառերով և ներառում է հաշվարկման կարգը:

10. Հայտով ներկայացված առաջարկված գնի հաշվարկը պետք է ներառի հայտատուի բոլոր ծախսերը, ներառյալ փոխադրումը «ՀրազՋԷԿ» -ի տարածք:

11. Հայտի և պայմանագրի ապահովումն իրականացվում է Գնումների մասին օրենքի 32 և 35 հոդվածների համաձայն

12. Հայտը ներկայացնել Գնումների մասին օրենքի 30-րդ հոդվածի պահանջներին համապատասխան՝ փաստաթղթային ձևով, մեկ բնօրինակ, հայերեն կամ ռուսերեն, մինչև 26.02.2021թ. ժամը11^{00}, «ՀրազՋԷԿ» ԲԲԸ, 2302, Կոտայքի մարզ, ք. Հրազդան, Գործարանային 1 հասցեով:

13.Մրցույթին առնչվող հարցերով դիմել՝ «ՀրազՋԷԿ» ԲԲԸ, գնահատող հանձնաժողովի քարտուղարին,
հեռ. (223) 6-07-12, ֆաքս (223) 2-36-12, էլ.փոստ՝ info@raztes.am:

14. Հայտերը կբացվեն 2021թ. փետրվարի 26-ին ժամը 11.30-ին գնահատող հանձնաժողովի նշանակված նիստում, ըստ հայտերի գրանցամատյանի հերթականության:

15. Սույն գնման գործընթացում գնահատող հանձնաժողովը ղեկավարվում է Գնումների մասին օրենքի և ՀՀ կառավարության 04.05.2017թ. № 526-Ն որոշման դրույթներով:

16. Պայմանագիրը կկնքվի մրցույթում ընտրված մասնակցի հետ անգործության ժամկետը լրանալուց հետո, տվյալ քիմիական նյութը ձեռքբերելու, պահելու, փոխադրելու համար թույլտվության պետական գրանցման փաստաթուղթ ներկայացնելու պայմանով:

17. Գնման գործընթացի հետ կապված գործողությունները կամ ընդունված որոշումները բողոքարկելու՝ մասնակցի իրավունքը և կարգը սահմանված է գնումների մասին օրենքի 46 և 50 հոդվածներով:

18. Գնումների մասին օրենքի 30-րդ հոդվածի պահանջներին չհամապատասխանող հայտերը գնահատող հանձնաժողովը հայտերի բացման նիստում մերժում է և նույնությամբ վերադարձնում ներկայացնողին:

19. Սույն գնման հայտի առնչությամբ պատվիրատուն այլ տեղեկատվություն չունի:

ԳՏՏ-Գլխավոր ճարտարագետ,
Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Ա.Մնացականյան